

Մարզպետն այցելեց Գառնահովիտ, Ջովասար, Ոսկեթաս եւ Կարմրաշեն համայնքներ

.Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը մայիսի 7-ին այցելեց Գառնահովիտ, Ջովասար, Ոսկեթաս, Կարմրաշեն համայնքներ եւ հանդիպեց բնակչության հետ: Նա տեղում ծանոթացավ բնակիչներին հուզող խնդիրներին: Ընդհանուր առմամբ, բոլոր համայնքներում էլ առկա խնդիրները միանման են, սակայն, մարզպետը դրանց լուծման համար անհատական մոտեցումներ ունեցավ եւ անհրաժեշտ պարզաբանումներ կատարեց:

Գառնահովիտի բնակիչներին առանձնապես հուզում էին պարարտանյութի, սերմացուի ձեռքբերման հարցերը: Մարզպետը նշեց, որ այս հարցի լուծումը արդեն տարիներ շարունակ իր վրա է վերցրել կառավարությունը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ գյուղացիներն իրենց անհրաժեշտ բուժանյութն ու սերմացուն կստանան՝ համաձայն ներկայացրած պահանջարկի:

Ջովասարցիներին հուզող հարցը հիմնականում վերաբերում էր ճանապարհների վերանորոգմանը եւ կենդանիների համար ջրի խմոցների կառուցմանը: Դրանց լուծման համար որոշվեց օգտագործել ոլորտով զբաղվող կազմակերպությունների հնարավորությունները:

Ոսկեթասում եւ Կարմրաշենում եւս առաջնայինը համայնքային ճանապարհների վերանորոգումն է: Հարցեր, որոնք մարզի ղեկավարության առաջնային լուծման հիմնախնդիրներից են եւ առաջիկա ծրագրերում ընդգրկված են: Քննարկվեցին նաեւ ոսկեթասցիներին մտահոգող հանդիսությունների սրահի գույքի ձեռքբերման, Կարմրաշենի լուսավորության անցկացման եւ այլ հարցեր:

Մարզպետին գյուղացիները դիմեցին նաեւ անձնական հարցերով: Տեղում լուծվեցին բուժօգնության, առողջարանի ուղեգրերի, դրամական օգնության տրամադրման հարցեր: Այցելություն կատարվեց նաեւ նորածիններ ունեցող ընտանիքներին: Մարզպետի կողմից փոքրիկներին ընծայվեցին մանկական հագուստ եւ պարագաներ: